ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան 09 դեկտեմբերի 2024թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տարոն Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Արշակյան, Հայկ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ 26.11.2024թ.-ին հայտարարված՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրացել է 09.12.2024թ-ին ժամը 10:30-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը պետք է կայանար 10.12.2024թ.-ին ժամը 10:30-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1.	Ավտոմեքենայի անվադող 225/65R17 ձմեռային	4 հատ	144000
2.	Ավտոմեքենայի անվադող 205/60R16 ձմեռային	4 հատ	104000
3.	Ավտոմեքենայի անվադող 205/50R17 ձմեռային	4 հատ	148000
4.	Ավտոմեքենայի անվադող 205/50R16 համասեզոնային	8 հատ	304000
5.	Ավտոմեքենայի անվադող 185/55R15 ձմեռային	4 հատ	84000
6.	Ավտոմեքենայի անվադող 185/55R15 ամառային	4 հատ	84000
7.	Ավտոմեքենայի անվադող	4 հատ	100000

	205/55R16 ձմեռային		
8.	Ավտոմեքենայի անվադող 205/55R16 ամառային	4 հատ	100000

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին ոչ մի մասնակից հայտ չի ներկայացրել:

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ պարզաբանումներն ու հարցումները ներկայացված են ստորև.

ՀԱՐՑՈՒՄ Հարգելի գործընկեր սույնով հայտնում եմ Ձեզ, որ սույն էլեկտրոնային աճուրդի պայմանագրի նախագծի հավելված 1-ի անվադողերի տեխնիկական բնութագրի սյունակի վերջին նախադասությունը շարադրված է հետևյալ կերպ. Մատակարարը պարտավոր է ներկայացնել անվադողի վազքի սահմանաչափի վերաբերյալ հավաստող փաստաթուղթ: Ինչի կապակցությամբ հայտնում եմ Ձեզ, որ համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման 21-րդ կետի ա ենթակետի պահանջով, այն է. ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում. Վերոհիշյալ որոշման կետը հստակ սահմանում է, որ մատակարարից կարող է պահանջվել ընդամենը երկու փաստաթուղթ՝ երաշխիքային նամակ, կամ համապատասխանության սերտիֆիկատ, իսկ Ձեր կողմից նման պահանջի անհրաժեշտությունը հիմնավորում է ՀՀ կառավարության 28.09.2023թ.-ի N 1666-Ն որոշման 2-րդ մասի 4-րդ գլխի 14-րդ կետի պահանջներով, ապա հայտնում եմ Ձեզ, որ այդ որոշման մեջ ոչ մի տեղ չի ասվում, որ այդ պահանջը պետք է ներառվի գնման հրավերների մեջ, այլ դա ներքին շրջանառության փաստաթուղթ է, որը մատակարարից չի կարող պահանջվել, քանի որ դա խախտում է ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման 21-րդ կետի ա ենթակետի պահանջները: Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ Ձեզ, սույն էլեկտրոնային աճուրդի պայմանագրի նախագծի հավելված 1-ի անվադողերի տեխնիկական բնութագրի սյունակի վերջին նախադասությունը հանել, նամանավանդ, որ նման փաստաթուղթ պրակտիկայում գոյություն չունի:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Հարգելի գործընկեր ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 28.09.2023թ.-ի N 1666-Ն որոշման 2-րդ մասի 4-րդ գլխի 14-րդ կետի պահանջների համապատասխան ներկայացվող անվադողի վազքի սահմանաչափի վերաբերյալ հավաստող փաստաթուղթը պետք է ներկայացնել մատակարարման փուլում, այլ ոչ գնման ընթացակարգի փուլում: Ձեր կողմից

ներկայացված փաստարկները կարող եք ներկայացնել մատակարարման փուլում պատասխանատու սորոբաժանմանը:

5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

5.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

N 1 չափաբաժինը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

5.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝_____ **Տ. Վարդանյան**

Քարտուղար՝_____ **Ն. Աբովյան**

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ **Գ. Արշակյան**

2. _____ **Հ. Հովհաննիսյան**